ՈՒՍՄԱՐԻ 2024-2025 / ANNÉE UNIVERSITAIRE 2024-2025

Փորձնական քննություններ/ Examens blancs

2-րդ կիսամյակ / 2 ème semestre

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. /Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5. (12 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 1 (22 միավոր)

1.1 .**Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (18 միավոր.** յուրաքանչյուր ճիշտ կետադրման համար տրվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր ճիշտ լրացված տառի կամ երկինչյունի համար տրվում է 1 միավոր):

Անդրեաս Ադամյանն զգուշորեն բաց արեց սենյակի դուռը, որ չարթնացնի օրորոցում քնած երեխային, և ներս մտավ: Նա խիստ մտահոգ էր. տնօրենը կանչել էր այս անպատեհ ժամին: Ներքին տագնապը թաքցնելով՝ մոտեցավ լուսամուտին՝ ծածկելով երկու փեղկն էլ, և նստեց թախտի վրա՝ ինքնիրեն մտածելով հանդիպման մասին:

Տնօրենն իրեն հանդիպել էր առավոտյան և հարցուփորձ արել իր առաջարկի մասին, իսկ հիմա ի՞նչ արտակարգ դեպք է պատահել: «Երևի նոր դավեր է նյութել իմ դեմ այդ հղփացած ու եղկելի մարդը»,- դառնությամբ մտածեց նա, ապա անփութորեն վեր կացավ տեղից՝ քայլերն ուղղելով դեպի դիմացի քառահարկ շենքը:

Մթության մեջ խավարը ճեղքեց շան՝ երեխայի լաց հիշեցնող կաղկանձը, որը չարագուշակ թվաց Ադամյանին: Մռայլ խոհերով նա անցնում էր կիսախավար փողոցով. թխպոտ երկնքից մաղում էր մանր անձրևը՝ միալար ու տաղտկալի: Վերջապես հասավ շենքին: Ադամյանը բարձրացավ սանդուղքներով և կիսամութ միջանցքով, որի լռությունը նրան խորհրդավոր թվաց, և ներս մտավ: Աշխատելով բարեհամբույր երևալ՝ տնօրենը մի երկու կցկտուր հարցուփորձից հետո դիմեց Անդրեասին՝ բարձրացնելով խոժոռ հոնքերը.

- Անդրեա՛ս, ես տհաճ բան պիտի ասեմ. Ձեզ վերաբերող որևէ լուր լսե՞լ եք:

Ադամյանը, խորազնին հայացքով նայելով տնօրենի վազվզող աչքերին, փորձում էր ինչ-որ բան գտնել այնտեղ: Նա հանդարտ ծխում էր՝ սեղանին կռթնած, և լուռ սպասում՝ էլ ինչ պիտի անի իր բախտի կամուրջը դաժանորեն կործանած այդ նողկալի մարդը: Երկուսն էլ ակնդետ ու լռելյայն նայում էին միմյանց. Ադամյանը՝ զզվանքով ու արհամարհանքով, տնօրենը՝ անսքող ատելությամբ: Նրա դեմքին զղջման նշույլ չկար, իսկ աչքերում ծվարել էր մաղձը: Ադամյանը զայրույթից սփրթնեց, և նյարդերը տեղի տվեցին:

1.2.Նշել այն տողը, որի բառերի միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (2 միավոր):

ա) ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ, ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

բ)ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ, ԾԱՂԿՈՒՆՅԱՑ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՅԲՈՒ-ԲԵՆ, ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

գ) ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱԹՈՒ ԽԱՆ, ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

դ) ԴՅՈՒՄԱ ՀԱՅՐ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՄԱՏԹԵՈՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ

1.3. Նշել այն տողը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են անջատ (2 միավոր):

1. առ (այն), ձեռք (բերովի), մինչև(իսկ), մեկ(երրորդական), տեր(Հմայակ)
2. **վաղուց(ի)վեր, դեմ (հանդիման), յոթ (հարյուր)քսան, մի(տեսակ), ի (բնե)**
3. դուրս (բերել), ի (հեճուկս), Հրազդան(հէկ), վառ (դեղին), Նոր(Ջուղա)
4. մեծից (փոքր), կիսով (չափ), անմեղ(մեղավոր), հինգ(տոկոսանոց), ի (դերև)ելնել

Առաջադրանք 2 (14 միավոր)

2.1. Տրված բառաշարքերից մեկական արմատ և ցանկացած ածանց /խառը կարգով/ ընտրելով՝ կազմել վեց բարդածանցավոր բառ (6 միավոր):

Մատնացույց	բնություն	ք	**չվացուցակ**
մտապատկեր	տասնհինգ	իկ	**մատնահետք**
մարտակարգ	բթամատ	ություն	**հնգամարտիկ//տասնամարտիկ**
հետագիծ	բարեխիղճ	ակ	**բնապահպան**
խոսնակ	երկկենցաղ	անք	**երկխոսություն // բարեխոսություն**
պահասենյակ	չվերթ	պան	**խղճմտանք // երկմտանք**

2.2. Ընդգծել պարզ բառերը (8 միավոր):

Ընչացք, քաղցկեղ, պատիճ, եզակի, գիսակ, ներքնակ, **ցամաք, պատնեշ**, արդի, **վերմակ, խորտիկ, խանձարուր, բարգավաճ,** նռճի, **երիտասարդ,** ջերմուկ, **խրատ,** կիրք, <u>իշխան</u>,[1] դժոխք:

[1] Այս տարբերակը նշելու պարագայում ևս պատասխանը կհամարվի ճիշտ:

Առաջադրանք 3 (16 միավոր)

3.1. Ընտրել հոմանիշների վեց զույգ (6 միավոր):

Հոլիկ, վիրապ, քերծե, խաշամ, խորխորատ, սյունագլուխ, բարակ, քերծ, բարաք, խոյակ, խոռոչ, շեղջ:

Հոլիկ-բարաք
վիրապ-խորխորատ
քերծե-բարակ
խաշամ-շեղջ
սյունագլուխ-խոյակ
քերծ-խոռոչ

3. 2. Ընտրել հականիշների վեց զույգ (6 միավոր):

Խորդուբորդ, օրհնել, բարեբեր, ընկրկել, մակերեսային, արիանալ, խոր, ողորկ, ստերջ, ահաբեկվել, գրոհել, բանադրել:

Խորդուբորդ-ողորկ
օրհնել-բանադրել
բարեբեր-ստերջ
ընկրկել-գրոհել
մակերեսային-խոր
արիանալ-ահաբեկվել

3.3. Գտնել դարձվածքի սխալ բացատրություն ունեցող շարքը (4 միավոր):

1. ա/ ձեռքերը լվալ – հույսը կտրել, հին դարմանը քամուն տալ – հինը հիշեցնել, զենքերը վայր դնել – հպատակվել
   բ/ սիրտը թունդ առնել – բորբոքվել, կողի ընկնել – պնդել, խոսքի թելը կտրել – ընդմիջել
   գ/ նիզակ ճոճել – հոխորտալ, ոտքերն ամպոտ – երազկոտ, լուն ուղտ դարձնել – ուռճացնել
   դ/ պատվեր տալ – ապսպրել, մեջքը դարձնել – հեռանալ, խոսք հասկացնել – համոզել
2. ա/ պղտոր ջրում ձուկ որսալ – խառնաշփոթությունից օգտվել, հյութերը քամել – կեղեքել, թեթև սրտով – խաղաղ
   բ/ նոր էջ բացել – հայտնագործել, փակուղի մտնել – ապշել, ոտքով գլխով – իսպառ
   գ/ սիրտը ելնել – հուզվել, մեջքը գետին դիպչել –պարտվել, խոսք տալ – պայմանավորվել

դ/ ոտքից գլուխ չափել – ուսումնասիրել, ձեռքերը շփել – հաջողությունից ուրախանալ, լուսնից ընկած – անծանոթ

Առաջադրանք 4 (16 միավոր):

4.1. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Ջրաչափեր, լուսանցքեր, **այլք, նստացույցեր,** առանց գրիչ, բազմիցս անգամ, **բազմաթիվ անգամներ**, հիշացնել, ինչո՞ւ համար, փարթամ կերպով, **ուսակապեր**, հուսում եմ, **քո վրայից**, նորից կրկնել, այլոք, փախնելու են, կապնվեց, **դիպավ, մեզ պես**, իմ մայրս, հանձինս մայրիկի, փախչած, **թաքցրի**:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

Մի քանի օր շարունակ **ֆիդայիների** ջոկատը կարողացավ հերոսաբար պաշտպանել այդ բարձունքը՝ թշնամուն **չթողնելով**՝ մի քայլ անգամ **մոտենա(ր)** իրենց **գրաված** դիրքերին:

(մոտենալ, ֆիդայի, գրավել, թողնել)

4. 3. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (4 միավոր):

ա) Հայերի ցեղասպանության դատապարտումը միայն մեր՝ հայերիս պայքարը չէ. այն պետք է (վերաբերվի, **վերաբերի**) ողջ մարդկությանը:

բ) Թեև քույրեր են, սակայն (հակամետ**, հակոտնյա**) բնավորության տեր մարդիկ են:

գ) Զբոսաշրջիկներն իրենց ապշած հայացքները (հառնել, **հառել**) էին տաճարի հրաշագեղ գմբեթին:

դ) Զորավարը, արագորեն (**հեծնելով,** հեծելով) իր հավատարիմ նժույգը, կոչով դիմեց զորքին:

Առաջադրանք 5 (12 միավոր)

5.1. Գտնել և ուղղել խնդրառական սխալ ունեցող նախադասությունները (4 միավոր):

ա. Լուսնի խավարումը համընկավ այդ ահեղ ճակատամարտի սկսվելուն:

բ. Տուժածը կարող է չանհանգստանալ. ես վարձահատույց կլինեմ նրան~~ից~~:

գ. Կապված քննության ընթացքում ի հայտ եկած փաստերի~~ցի~~ **հետ (ն)**՝ դատական նիստը հետաձգվեց:

դ. Արևմտյան Հայաստանում շատերը հարկադրված էին մահմեդականություն դավանելու՝ զավակների կյանքը փրկելու համար:

5.2. Գտնել և ուղղել համաձայնության սխալ ունեցող նախադասությունները (4 միավոր):

ա. Ամեն ինչ՝ անտանելի շոգը, մարդկանց բազմությունը, անտանելի ~~էին~~ **էր** թվում փողոցում սպասող ծեր կնոջը:

բ. Նա այն մարդկանցից է, որ, ճանաչման հասնելով, բնավ չեն մեծամտանում:

գ. Մարդկանց մեծ մասը կարծում ~~են~~ **է,** որ ճակատագիրն իրենցից երես է թեքել:

դ. Որպես մեծ հայրենասերի՝ Նժդեհին միայն անկախությունից հետո գնահատեց մեր ժողովուրդը:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասության պարզեցման ճիշտ տարբերակը (2 միավոր):

Ամեն անգամ, երբ պայծառ գույներով պատկերացնում էր իր իսկ մահվան օրը, նա սաստիկ հուզվում էր:

ա) Ամեն անգամ նա, պայծառ գույներով իր իսկ մահվան օրը պատկերացնելիս, սաստիկ հուզվում էր:

բ) Ամեն անգամ՝ սաստիկ հուզվելիս, նա պայծառ գույներով իր իսկ մահվան օրն էր պատկերացնում:

գ) Ամեն անգամ՝ պայծառ գույներով իր իսկ մահվան օրը պատկերացնելիս, նա սաստիկ հուզվում էր:

դ) Պայծառ գույներով իր իսկ մահվան օրը պատկերացնելիս նա սաստիկ հուզվում էր:

5. 4. Նշել անուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը (2 միավոր):

Արշակը խորհում էր, որ ինքը չի ների իրեն դեմ կանգնող և ոչ մեկին. ինքը կոչված է թագավոր լինելու և անպայման կլինի:

ա) Արշակը խորհում էր. «Նա չի ների իրեն դեմ կանգնող և ոչ մեկին. նա կոչված է թագավոր լինելու և անպայման կլինի»>:

բ) «Ես չեմ ների ինձ դեմ կանգնող և ոչ մեկին. ես կոչված եմ թագավոր լինելու և անպայման կլինեմ»,- խորհում էր Արշակը:

գ) Արշակը խորհում էր. «Նա չի ների ինձ դեմ կանգնող և ոչ մեկին. ես կոչված եմ թագավոր լինելու և անպայման կլինեմ»:

դ) «Նա չի ների նրան դեմ կանգնող և ոչ մեկին. նա կոչված է թագավոր լինելու և անպայման կլինի»,- խորհում էր Արշակը: